



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ՈՐՈՇՈՒՄ

N 816-Ա

18 դեկտեմբերի 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ  
ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՄԻՆՉԵՎ 100 ԱՇԱԿԵՐՏ ՈՒՆԵՑՈՂ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ  
ԼՐԱՎՃԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության  
2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ  
հոդվածի 1-ին մասի դրույթներով հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության  
կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշման N 9.1 հավելվածը,  
ուսուցիչների հավելավճարները վճարելու նպատակով՝

**որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից Հայաստանի  
Հանրապետության Գեղարքունիքի մարզապետի աշխատակազմին « ՀՀ Գյուղական  
բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող պետական հանրակրթական  
ուսումնական հաստատություններին» միջոցառման շրջանակներում տնտեսագիտական  
դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված 108577500  
(հարյուր ութ միլիոն հինգ հարյուր յոթանասունյոթ հազար հինգ հարյուր) Հայաստանի  
Հանրապետության դրամ գումարից 108577500 (հարյուր ութ միլիոն հինգ հարյուր  
յոթանասունյոթ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը  
վերաբաշխել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային




Ենթակայության թվով 38 (Երեսունութ) հանրակրթական դպրոցներին՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար ( գլխավոր ֆինանսիստ ) Սիմոն Մանուկյանին՝ կնքել գումարի հատկացման պայմանագրեր:


18.12.2024

X



ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503



ՄԱՐԶՊԵՏ՝  
ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ